ՄԱԶՔԹԱՑ ՍԱՆԵՍԱՆ ԹԱԳԱՎՈՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆ

ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մծբնի 298 թ. քառասնամյա հաշտության պայմանագրով Մեծ Հայքի թագավորությունը երկարատև խաղաղ զարգացման հնարավորություն ստացավ։ Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի երկուստեք համաձայնությամբ հարգվում էին հռոմեական պաշտպանության և հովանավորության ներքո անցած Մեծ Հայքի սահմաններն ու տարածքային ամբողջականությունը։ Հայկական գահին բարձրացած Տրդատ Գ Արշակունին ստիպված էր ավելի շատ հոգալ թագավորության հյուսիսային և հյուսիս-արևելյան սահմանների պաշտպանության մասին, որոնց անդորրը հաճախակի խախտում էին հյուսիսային կովկասյան լեռնականները։ Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո հայոց արքունիքը ավելի ու ավելի մեծ ուշադրություն էր նվիրում հայոց արևելից կողմերին, նպատակ ունենալով կարճ ժամանակում ամրապնդել նոր կրոնի դիրքերը թագավորության հիշյալ ծայրամասերում։ Արքունիքի նման վերաբերմունքը շատ բանով պայմանավորված էր Մեծ Հայքի հյուսիս-արևելյան կողմերի վերակացուների և գործակալների հաճախակի դիմումներով, որոնց մասին Մովսես Խորենացին գրում է. «...գործակալք կողմանցն արևելից հիւսիսոյ, վերակացուք հեռաւոր քաղաքին, որ կոչի Փայտակարան՝ ասեն ցարքայ. «Եթէ կամիցիս ուղղութեամբ վարել կողմանցն այնոցիկ ըստ այսմ հաւատոյ՝ առաքեա նոցա եպիսկոպոս ի զաւակէ սրբոյն Գրիգորի՝ զի յոյժ փափագելով խնդրեն. և գիտեմք հաւաստի, թէ ի հռչակեալ անուանէն Գրիգորի՝ ակնածեսցեն և ի նորին զաւակէ, առնել զամենայն ըստ հրամանիս»[1]։ Հայոց թագավորը իր գործակալների և վերակացուների հետ արևելք ուղարկեց Գրիգոր Լուսավորչի թոռանը՝ տասնըհինգամյա եպիսկոպոս Գրիգորիսին և Սանատրուկ Արշակունուն[2]։ Հայոց արքունիքը նրանց արևելք ուղարկելով որոշակի քաղաքական խնդիրներ էր հետապնդում։ Պատանի Գրիգորիսը նշանակվում էր ոչ միայն հայոց հյուսիս-արևելյան կողմերի եպիսկոպոս, այլև ստանում էր «յաստիճան եպիսկոպոսութեան աշխարհին Վրաց և Աղուանից, այս ինքն սահմանացն Մազքթաց»[3]։ Փավստոս Բուզանդը, անդրադառնալով Գրիգորիսի եղերական մահվանը, նրան համարում է անգամ կաթողիկոս «կողմանցն Վրաց և Աղուանից»[4]։ Սկզբնական շրջանում Գրիգորիս եպիսկոպոսը լայն քարոզչական աշխատանք տարավ Մեծ Հայքի հյուսիս-արևելյան երկրամասերում մինչև Ատըր-

---

1 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, էջ 259։

2 Նույն տեղում, էջ 259։

3 «Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1832, էջ 10։

4 Նույն տեղում, էջ 13։

պատկանի սահմանները, «շինեաց նորոգեաց զամենայն եկեղեցիս կողմանցն այնոցիկս»[5], իսկ այնուհետև իր գործունեությունը ծավալեց վրաց և աղվանից կողմերում, որոնք հիշյալ շրջանում և դրանից առաջ, որպես կանոն, գտնվում էին հայոց թագավորության ազդեցության ներքո։ Հավանաբար, քրիստոնեությունը տարածելու միջոցով հայոց արքունիքը կամենում էր է՛լ ավելի ուժեղացնել իր ազդեցությունը հիշյալ երկրներում։ Սկզբնական շրջանում Գրիգորիսը հասավ նշանակալից հաջողությունների նոր վարդապետության տարածման ասպարեզում, սակայն շատ չանցած նրա առաքելությունն ավարտվեց լիակատար ձախողմամբ, իսկ ինքն էլ, ինչպես կտեսնենք ստորև, սպանվեց մագքութների կողմից։

Սկզբնաղբյուրները ոչինչ չեն ասում Սանատրուկի ինքնության մասին և լոկ շեշտում են նրա Արշակունի լինելը։ Դժվար է, անշուշտ, պարզել, նա հայ Արշակունի էր, թե՞ պարթև։ Սակայն աներկբայելի է, որ նա եղել է գործունյա և ունակ անձնավորություն, որին հայոց արքունիքը՝ հանձին Տրդատ Գ-ի, որոշակի քաղաքական առաջադրանքներով, որոնք պետք է զորավիգ լինեին Գրիգորիս եպիսկոպոսի հոգևոր գործունեությանը, ուղարկել էր Փայտակարան՝ որպես գործակալ։ Դատելով Սանատրուկի հետագա քայլերից, նա հավակնություններ ուներ հայկական գահի նկատմամբ, որի ձեռքբերմանն էլ նվիրվեց նրա ողջ գործունեությունը Փայտակարանում։

Մինչ Գրիգորիս եպիսկոպոսը Կուրի ձախափնյակում եռանդուն տարածում էր քրիստոնեությունը, Սանատրուկը փոխանակ նպաստելու հայոց թագավորության ազդեցության ուժեղացմանը այդ երկրներում, դավաճանական կապերի մեջ էր մտնում մագքթաց արքունիքի և Սասանյան Պարսկաստանի հետ, թերևս զգուշացնում էր մագքութներին քրիստոնեության տարածման հետևանքով հնարավոր քաղաքական հետևանքներից և բացահայտորեն դավում Գրիգորիսին։

Դատելով Փավստոս Բուզանդի հաղորդած տեղեկությունից, մագքթաց Սանեսան թագավորը և զորականները, ոչ առանց Սանատրուկի օգնության, ինչպես կարելի է կռահել պատմահոր վկայությունից[6], հասկացել էին հայոց արքունիքի հետապնդած քաղաքական նպատակները. «Այլ, ասէին (մագքութները—Բ. Հ.), այս խորհուրդ Հայոց թագաւորին է. զսա յղել առ մեզ, զի այսու ուսմամբ խափանեսցէ զմեր արշաւանս ասպատակութեան հինի յաշխարհէն իրմէ»[7]։ Սակայն քանի դեռ կենդանի էր Տրդատը, քաղաքական մթնոլորտը համեմատաբար հանգիստ էր, իսկ Սանատրուկն էլ վճռական քայլերի չէր դիմում։ Դրությունն արմատապես փոխվեց Տրդատի մահից հետո։ Նկարագրելով իրադարձությունների զարգացումը, Մովսես Խորենացին գրում է. «Իսկ ի հասանել համբաւոյ վախճանին Տրդատայ, ի դուսելոյ նորին Սանատրկոյ և այլոց ոմանց հանապազաստուտ արանց Աղուանից՝ սպանին զերանելին, ընթադրեալ ձիովք, բարբարոսքն ի Վատնեան դաշտին, մերձ ի Կասբիականն կոչեցեալ ծով։ Զոր բարձեալ սարկաւագաց նորին, բերելով ի փոքր Սիւնիս, թաղեցին յԱմարաս աւանի։ Իսկ Սանատրկոյ թագ կապեալ ին-

---

5 Նույն տեղում։

6 Մովսես Խորենացի, էջ 259։

7 Փավստոս Բուզանդ, էջ 14 (այս և հետագա բնագրային բնդգծումները մերն են—Բ. Հ.)։

քեան՝ ունի զքաղաքն Փայտակարան. զօրութեամբ օտար ազգաց խորհէր տիրել բոլորումս Հայոց»[8]։

Պատմահոր այս արժեքավոր տեղեկությունն ամենայն որոշակիությամբ ցույց է տալիս, որ Գրիգորիսի սպանությունը մեծապես պայմանավորված էր Սանատրուկի և մաղքթաց թագավորության մի խումբ աղվանից իշխանների դավերով և որ այն կատարվել էր Տրդատ թագավորի մահից հետո։ Օգտագործելով ստեղծված նպաստավոր վիճակը, Սանատրուկը իրեն թագավոր էր հռչակել իր կառավարմանը հանձնված Փայտակարան քաղաքում և նրա շրջակա գավառներում՝ նպատակ ունենալով օտար ուժերի օգնությամբ տիրանալու Մեծ Հայքի թագավորությանը։ Այլ խոսքով՝ Սանատրուկի ելույթը սովորական պառակտիչ գործողություն էր կենտրոնական իշխանության դեմ, որոնցով այնքան հարուստ է բոլոր ավատատիրական երկրների պատմությունը։

Եթե հավատ ընծայենք Փավստոս Բուզանդին, ապա մաղքթաց Սանեսան թագավորը Գրիգորիսի սպանությունից հետո սաստիկ թշնամացավ հայոց Խոսրով թագավորին, մեծ բանակով արշավեց Հայաստան և սկսեց այն ասպատակել, ավերել ու կողոպտել։ Սակայն, մեր կարծիքով, դեպքերի իրական հաջորդականությունը պահպանվել է Մովսես Խորենացու մոտ, առավել ևս, որ Փավստոս Բուզանդը այդպես էլ չի բացատրում Խոսրովի հետ Սանեսանի թշնամանալու պատճառները, որոնք, անշուշտ, որոշակի գործողությունների արդյունք պետք է լինեին։

Տրդատի մահից շատ չանցած Հռոմի օգնությամբ գահ բարձրացավ Խոսրով Կողակը, որի առաջին քայլերից մեկը, անշուշտ, պետք է լիներ Սանատրուկի պատժումը։ Խոսրովի թագադրությունից հետո օգնության եկած հռոմեական զորամասերը և հայկական հյուսիսային ու արևմտյան զորաբանակները Անտիոքոս զորավարի գլխավորությամբ արշավեցին Փայտակարան՝ պատժելու Սանատրուկ «թագավորին»։ Այդ դեպքերի մասին պատմահայրը գրում է. «(Անտիոքոս զորավարը)... առեալ ընդ իւր զմիհրան և զբագարատ զօրօք իւրեանց, և միահամուռ ամենայն յունականօքն խաղայ ի վերայ Սանատրկոյ։ Իսկ նորա պարսկական զօրօք լցեալ զքաղաքն Փայտակարան՝ ինքն առ արքայն Շապուհ փութացեալ անկանի, հանդերձ Աղուանից նախարարօք։ Զոր տեսեալ Անտիոքայ, եթէ ոչ ի հնազանդութիւն խաղաղութեան նուաճեցան՝ հրաման տայ առիւ զիշխանութիւն պառակտելոցն

---

8 Մովսես Խորենացի. էջ 259—260։ Այս իրադարձությունների մասին Փավստոս Բուզանդը գրում է. «Ապա շրջեցաւ թագաւորն, և լուաւ բանից զօրացն իւրոց. և կալան ձի մի ամենի, կապեցին կախեցին զմանուկն Գրիգորիս զագաւ ձիոյն. և արձակեցին ընդ ծովեզեր դաշտին հիւսիսական ծովուն մեծի, արտաքոյ իւրեանց բանակին ի դաշտին Վասանայ։ Եւ այսպէս սպանին զառաքինի քարոզն Քրիստոսի զմանուկն Գրիգորիս. Եւ ապա բարձին զնա որք ընդ նմա նրթեալ էին ի գաւառէն Հարանդայ, և քերին ի գաւառն իւրեանց ի կողմանս Աղուանից ի սահմանս Հայոց ի Հարանդ. ի գեղն՝ որ անուանեալ կոչի Ամարաց։ Եւ եդին զնա առ եկեղեցեաւն. զոր շինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի. հաւուն Գրիգորիսի՝ քահանայապետին մեծի աշխարհին Հայաստան երկրին» (էջ 14—15)։ Փավստոս Բուզանդի այս հատվածում «ի կողմանս Աղուանից» արտահայտությունը պետք է սրբագրել «ի կողմանց Աղուանից» (Բ. Հարությունյան. Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչաքաղաքական կացությունը 387—451 թվականներին («Բանբեր Երևանի համալսարանի». 1976, № 2, էջ 78—79)։

նուաղեցուցանել. և իր ժողովեալ զհարկն՝ առ կայսր գնայ»[9]։ Առաջին հայացքից Մովսես Խորենացու տեղեկությունները հստակ են. Սանատրուկը, հռոմեական զորամասերի և հայկական զորաբանակների միացյալ արշավանքից սարսափահար, դիմում է պարսից Շապուհ Բ երկարակյաց արքայի օգնությանը, նրանից ստացած պարսից զորամասերով ամրացնում է Փայտակարանը և մի խումբ աղվանից իշխանների հետ փախչում պարսից թագավորի մոտ։ Սակայն նման եզրակացությունը պարունակում է մի քանի հակասություններ։ Նախ՝ պարսից զորքերով Փայտակարանն ամրացնելուց հետո Սանատրուկը հազիվ թե փախչեր Պարսկաստան, այլ կկազմակերպեր իր «մայրաքաղաքի» պաշտպանությունը, շատ լավ հասկանալով, որ իր փախուստը կարող է կազմալուծել Փայտակարանի դիմադրության գործը։ Մյուս կողմից, ոչ պակաս տարօրինակ է պարսից զորքերի մասնակցությունը Փայտակարանի պաշտպանությանը։ Կնքելով 298 թ. Մծբնի 40-ամյա հաշտությունը, Պարսկաստանը երկար ժամանակ ստիպված եղավ ձեռնպահ մնալ Հռոմի և Հայաստանի դեմ ակտիվ գործողություններից։ Զորք ուղարկելով Փայտակարան, Շապուհ Բ-ն պետք է խախտեր Մծբնի հաշտությունը, որը քիչ հավանական էր IV դ. 30-ական թվականներին։ Ավելի շուտ կարելի է ենթադրել, որ նրա միջամտությունը կրում էր դիվանագիտական բնույթ, քանի որ պատմահոր ասելով, մինչև Փայտակարանի արշավանքը ձեռնարկելը Անտիոքոս զորավարը հայոց հարավային զորաբանակը և կիլիկյան զորամասերը Մանաճիհրի գլխավորությամբ ուղարկել էր Ասորեստանի և Միջագետքի, իսկ արևելյան զորաբանակը և գաղատացի զորամասերը Վահան Ամատունու գլխավորությամբ՝ Ատրպատականի կողմերը՝ թույլ չտալու համար պարսից թագավորի ռազմական միջամտությունը. «Եւ առաքեաց (Անտիոքոսը— Հ. Բ.) զՄանաճիհր հարաւային զօրօք և զԿիլիկեցի զօրս ընդ նմա զկողմամբք Ասորեստանի և Միջագետաց. և զՎահան Նահապետ Ամատունեաց արեւելեան գնդաւն և զԳաղատացի զօրս ընդ նմա առաքեաց զկողմամբք Ատրպատականի, ունել պահ յարքայէն Պարսից»[10]։ Ստեղծված պայմաններում Փայտակարանի գործերին Շապուհ Բ-ի ամեն մի միջամտություն ոչ միայն Մծբնի հաշտության պայմանների խախտում էր, այլև կարող էր առիթ դառնալ մեծ պատերազմի։ Իրադարձությունների ընթացքը, գոնե մինչև Սանեսանի արշավանքը, չհանգեցրեց պարսկա-հռոմեական պատերազմի, ուստի մնում է ենթադրել, որ պարսիկները Սանատրուկին ուղղակի օգնություն ցույց չէին տվել և այդ պատճառով էլ վերջինս փախել էր՝ Շապուհ Բ-ի օգնությանն ապավինելու։ Այդ դեպքում ինչպես հասկանալ պատմահոր «Իսկ նորա (Սանատրուկի— Բ. Հ.) պարսկական զօրօք լցեալ զքաղաքն Փայտակարան» արտահայտությունը։ Կարծում ենք, որ այդ հարցի լուծումը գտնվում է Փավստոս Բուզանդի երկում։ Պատմելով Արշակ Բ թագավորի դեմ ապստամբած Կասպից երկրի՝ հայոց թագավորությանը միացնելու մասին, նա գրում է. «Յաղագս Կասրից։ Ապա խնդրէր զվրէժն մեծապէս սպարապետն Մուշեղ յերկրէն Պարսից և ի Փայտակարան քաղաքէ. փոխանակ զի և նոքա նշկահեցին ստեղին արքային Հայոց»[11]։ Հ. Հյուբշմանը, անդրադառնալով վերնագրի

9 Մովսես Խորենացի, էջ 262—263։
10 Մովսես Խորենացի, էջ 262։
11 Փավստոս Բուզանդ, էջ 210։

Կասպից և տեքստի Պարսից աշխարհ անվանումներին, գտնում է, որ «յամե-նայն դէպս հոս պարսիկները չեն կրնար հասկցուած ըլլալ»[12]։ Գերմանացի հայագետը, գտնելով խիստ սրամիտ Ք. Նոյմանի կողմից Փավստոսի Պարսքը Ստրաբոնի «Աշխարհագրության» մեջ հանդիպող Παρσιοι ցեղի[13] հետ նույնացվելը, այնուամենայնիվ, գալիս է այն եզրակացության, որ Պարսքը վրիպակ է, որը պետք է Կասպք սրբագրել[14]։ Կարծում ենք, որ Փավստոս Բուզանդի հիշատակած Պարսից աշխարհը ոչ մի կապ չունի Պարսկաստանի հետ և ամենասերտ աղերս ունի Մովսես Խորենացու «Պարսկական զօրօք լցեալ զքաղաքն Փայտակարան» արտահայտության հետ։ Ոչ թե պարսկա-կան զորքեր էին եկել Փայտակարան, այլ տեղական պարս ցեղի զինվորնե-րով էր ամրացրել Սանատրուկը իր կենտրոնը և չվստահելով այդ ուժին՝ փախել էր Շապուհ Բ-ի մոտ։ Չի բացառվում, որ պատմահոր մոտ սկզբնա-պես եղել է ոչ թե «պարսկական զօրօք», այլ «պարսական զօրօք», որը հե-տագայում սխալ մեկնաբանվելու հետևանքով սրբագրվել է գրիչների կողմից։

Ուսումնասիրողներին շփոթության մեջ է գցել նաև այն հանգամանքը, որ Սանատրուկը Պարսկաստան էր փախել աղվանից նախարարների հետ, ուստի և նրան հռչակում են ոչ ավել ոչ պակաս աղվանից թագավոր։ Ըստ մեզ, այդ խնդիրը ունի հետևյալ բացատրությունը։ Անտրամաբանական չէ կարծել, որ Փայտակարան քաղաքի դեմ ձեռնարկած արշավանքի ժամանակ հայ-հռոմեական զորքերը որպես վրեժ Գրիգորիսի սպանության և Սա-նատրուկին օժանդակություն ցույց տալու համար, ասպատակեցին Կուրի ձախափնյակը, ավերեցին մազքթաց կամ աղվանից թագավորության հա-րավային շրջանները, որը և թերևս պատճառ դարձավ մազքթաց Սանեսան և հայոց Խոսրով թագավորների թշնամության։ Ենթադրել, թե այդպիսի պատ-ժիչ գործողություններ մազքթաց թագավորության նկատմամբ չեն ձեռնարկ-վել, անիմաստ է, որովհետև Սանատրուկին հաղթելու համար առաջին հեր-թին հարկ էր նրան զրկել Սանեսանի և Շապուհ Բ-ի օգնությունից։ Պատմա-հոր մոտ հենց հիշվում են Կուրի ձախափնյակի աղվանից իշխանները, որոնք հայ-հռոմեական զորքերի արշավանքից սարսափած՝ Սանատրուկի հետ փա-խել էին Պարսկաստան։

Հայ-հռոմեական զորքերն ասպատակեցին և ավերեցին Փայտակարանն ու նրա շրջակայքը, սակայն Մովսես Խորենացու տեղեկությունից պարզ չէ, թե այդ ժամանակ Փայտակարանը միացվեց կրկին Հայոց թագավորությանը, թե՞ ոչ։ Այդ հարցին հստակ պատասխան չի տալիս նաև մազքութների ար-շավանքի մասին Մովսես Խորենացու տված նկարագրությունը. «Յաւուրս սորա (Խոսրով Կոդակ թագավորի— Բ. Հ.) միաբանեալ բնակիչք հիւսիսոյ Կաւկասու, գիտացեալ զթուլասրտութիւն նորա և զյուլութիւն, և առաւել ի հրապուրելոյ մազթանաց Սանատրկոյ՝ ի գաղտնի հրամանէ Շապհոյ Պար-սից արքայի, արշաւեալ ի միջոց աշխարհիս մերոյ հասանէին մեծաւ ամ-բոխիւ, որպէս թէ երկու բիւրովք»[15]։ Հնարավոր է, որ հայ-հռոմեական զոր-

12 Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղւոյ անունները. Վիեննա, 1907, էջ 103։

13 Strabo, XI, 7, 1.

14 Հ. Հյուբշման, նշվ. աշխ., էջ 103—104։

15 Մովսես Խորենացի, էջ 266։

քերը, այնուամենայնիվ, ազատագրեցին Փայտակարանը և այն միացրին Մեծ Հայքին. սակայն չի բացառվում, որ ընդդիմադիր ուժերը քաղաքն իրենց ձեռքում պահեցին մինչև Սանեսանի ձեռնարկած արշավանքը։ Սակայն Մովսես Խորենացու այս տեղեկությունը արժեքավոր է մեկ այլ տեսանկյունից։ Շապուհ Բ-ն այս անգամ էլ չհանդգնեց դիմելու ռազմական միջամտության, այլ գաղտնի հրահանգ տվեց Սանատրուկին՝ Մեծ Հայքի թագավորության դեմ դուրս բերելու հյուսիսականներին, տվյալ դեպքում մազքութներին և նրանց դաշնակիցներին, որոնց անունները պահպանել է Փավստոս Բուզանդի Պատմությունը։ Եվ իրոք, Սանատրուկին հաջողվում է իր վաղեմի դաշնակցին՝ մազքթաց Սանեսան թագավորին, որը, ինչպես վերն ասվեց, խիստ թշնամացած էր Խոսրով Կոտակին թերևս հայ-հռոմեական պատժիչ գործողությունների պատճառով, 20000-անոց բանակով դուրս բերել Հայաստանի դեմ։ Արշավանքի մանրամասն նկարագրությունը պահպանվել է Փավստոս Բուզանդի երկում. «Յայնմ ժամանակի թագաւորն Մազքթաց Սանէսան անհնարին խիթեաց զսրտմտութիւն ոխութեան ընդ իւրում ազգակցին Խոսրովու արքային Հայոց, և գումարեաց ժողովեաց զամենայն զօրս Հոնաց և Փոխաց, Թաւասպարաց, Հեճմատակաց, Իժմախաց, Գաթաց, և Գղուարաց, Գուգարաց, Շղբաց և Ճղբաց և Բաղասճաց և Եգերսուանացն, և այլոց խառնաղանճ բազմութեամբ անթիւ անբնակն վաչկատուն զօրութեանց, որում միանգամ ինքն իշխէր զօրացն բազմաց։ Եկն անց ըստ իւր սահմանն ընդ գետն մեծ ընդ Կուր, և եկն տարածեցաւ ելից զերկիրն Հայոց աշխարհին... Եւ ելին լցին ծածկեցին զամենայն երկիրն Հայոց. քանդեցին, գերեցին, առ հասարակ աւերեցին. սփռեցան տարածեցան զսահմանօքն, լի և լի ծաւալեցան մինչև ի փոքր քաղաքիկն Սատաղու, և մինչև ի Գանձակ սահմանս Ատրպատական. խաղացուցին ի մի վայր ժողովեցին, ի ժամադիր կողմանս յԱյրարատեան գաւառին բանակ մեծ լինէր։

Եւ խոյս ետ թագաւորն Հայոց Խոսրով յիւրմէ եղբարցն, նոյն ի Սանէսանայ յարքայէն Մազքթաց. և անկան յամուր բերդն Դարեւնից յերկիրն Կովգայ, և ընդ նմա ծերունին Վրթանէս եպիսկոպոսապետն Հայոց։ Ապա առնուին պահս պահել, և խնդրել յաստուծոյ՝ զի փրկեսցէ զնոսա յայնմ ի դառն դահճէն, և սկսան խնդրել ի տեառնէ աստուծոյ։ Եւ նա ծածկեալ բռնացեալ ունէր զերկիրն առ հասարակ իբրև տարի մի։ Ապա եկն եհաս Վաչէ որդի Արտավազդայ ի Մամիկոնէն տոհմէն, զօրաւար ամենայն Հայոց մեծաց։ Զի երթեալ էր նա ի ժամանակին յայնմիկ զերկայն ճանապարհս ի կողմանս Յունաց։ Ապա ժողովեաց նա զամենայն քաջս քաջս նախարարացն, և գունդ կազմէր բազում յոյժ. և հասանէր անկանէր ի վերայ բանակին, յառաւօտուն ժամուն այգնալոյն պաշտամանն. զի բանակեալ էին նոքա ի լերինն՝ որ կոչի Ցլու գլուխ. և առ հասարակ ընդ սուր հանին զամենեսեան, և ոչ մի ոչ ապրեցուցանէր, և դարձուցանէր զբազմութիւն գերեացն։ Եւ յետ այսորիկ առնոյր ղաւարսն, խաղայր գնայր երթայր իջանէր ի դաշտն Այրարատեան գաւառին. երթայր գտանէր զՍանէսան թագաւորն Մազքթաց բուն գնդաւն, անթիւ անհամար զօրօքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքի։ Առեալ զգունդն Վաչէ, և յանկարծակի յարձակեցաւ ի վերայ քաղաքին և մատնեաց զնոսա տէր ի ձեռս նորա։

Եւ իբրև տեսին զնա յարձակեալ ի վերայ իւրեանց, փախեան ելին ի քաղաքէն անտի յառապարն ի կողմն յՕշական բերդին. և զանապատն, և զքա-

բուռ տեղիսն ապաւէն իւրեանց համարեցան. և լինէր սաստիկ պատերազմ յոյժ յոյժ։ Եւ նիզակակիցք զօրավարին Հայոց, որ էին Բագրատ Բագրատունի, Մեհունդակ և Գարեգին Ըռշտունիք, և Վահան նահապետն Ամատունեաց տոհմին, և Վարազ Կամսարական, հասանէին հարկանէին սատակէին զօրսն Ալանացն, և Մազքթացն, և Հոնացն և գայլոց ազգացն, և լնուին զդաշտն առապարացն առ հասարակ դիակամբ մեռելոց. մինչ զի իբրև զգետ յարուցեալ երթայր արիւնն անհնարին, և ոչ լինէր թիւ զօրացն մեռելոց։ Եւ զմնացեալսն սակաւս առաջի իւրեանց հալածականս տանէին մինչև յաշխարհն Բաղասճաց և զգլուխն Սանէսանայ մեծի թագաւորին եկին բերին առաջի արքային Հայոց։ Սակայն իբրև ետես, լալ սկսաւ. ասէ, Եղբայր իմ էր ազգաւ Արշակունի։ Ապա եկեալ էր արքային ի տեղի ճակատուն, և ընդ նմա մեծ եպիսկոպոսապետն Հայոց. և տեսին զկոտորածն զօրացն հարելոց, զի նեխէր երկիրն ի հոտոյ մեռելոցն։ Ապա ետուն հրաման՝ գուգաղ հանել յաշխարհէ, և անդէն ծածկել քարակարկառ վիմօք, զի մի ի շարաւոյ հոտոյն մեռելոտի ոսկերացն երկիրն պղծեսցի։ Եւ դադարեաց երկիրն ի խաղաղութեան ամս հարուստ մի. և այսպէս վրէժ սրբոյն Գրիգորի խնդրեցաւ ի թագաւորէն Սանէսանայ և ի բանակէ նորա. զի ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի»[16]:

Մազքութների արշավանքի համակողմանի քննությանն անդրադառնալու համար, ավելորդ չենք համարում մեջբերել նաև պատմահոր նկարագրությունը. «Յաւուրս սորա միաբանեալ բնակիչք հիւսիսոյ Կաւկասու, գիտացեալ զթուլասրտութիւն նորա և զյուլութիւն, և առաւել ի հրապուրելոյ մաղթանաց Սանատրկոյ ի գաղտնի հրամանէ Շապհոյ Պարսից արքայի, արշաւել ի մէջոց աշխարհիս մերոյ հասանէին մեծաւ ամբոխիւ, որպէս թէ երկու բիւրովք։ Որոց պատահեալ պատերազմաւ արևելեայ և արևմտեայ զօրուն Հայոց հանդերձ զօրապետօքն Բագարատաւ ասպետիւ և Վահանաւ նահապետիւ Ամատունեաց. քանզի հարաւային մեր գունդք առ արքային Խոսրովայ էին յաշխարհին Ծոփաց, և զՄիհրան սպանեալ, և զհիւսիսային մեր գունդն հարեալ, ի թիկունս ընկեցեալ թշնամեացն, և հասեալ ի դրունս Վաղա[ր]շապատու պաշարէին։ Որոց յանկարծակի ի վերայ անկեալ արևելեայ և արևմտեայ մեր զօրուն, և անտի մերժեալ զՕշական առապարաւն, ոչ ետուն ժամանել ճապաղել ի նետաձգութիւն ըստ օրինի իւրեանց սովորութեանն, երագեալ սաստկապէս զհետ ունելով քաջաձիոցն ի դժուարս քարանց և ի վիմուտ տեղիս։

Մինչև յոչ կամաց գումարեալ թշնամեացն ի ճակատ, և զօրագլուխ նիզակաւորացն լեալ անարի ոմն սկայ վառեալ, և թաղեաւ կաձեալ բոլորովամենևիմբ պարածածկեցեալ, շահատակէր ի մէջ զօրացն։ Յոր ակնակառոյց լեալ քաջացն Հայոց և յարձակեալ ոչ ինչ կարէին վնասել. քանզի հարեալ նիզակաւ ճախր առնոյր կաձեայն։ Յայնժամ քաջին Վահանայ Ամատունւոյ հայեցեալ յեկեղեցին կաթուղիկէ, ասէ. «Օգնեա ինձ, Աստուած, որ զԴաւիթեան պարսաքարն դիպեցուցէր ճակատու խրոխտացելոյն Գողիաթու. ուղղեա և զնիզակս իմ ական հզօրիս այսորիկ»։ Եւ ոչ վրիպեցաւ ի խնդրոյն. ընդ գաւակ ձիոյն հարեալ յերկիր կործանեաց զահագին զվիրագն։ Այսպիսի դիպուած ի փախուստ յորդորեաց զթշնամիսն, և ի յաղթութիւն զՀայոց գունդն զօրացոյց։ Եւ աստի դարձեալ յաշխարհն Ծոփաց Բագարատ վկայ հաստատուն առանց նախանձու լինի առ արքայի վասն Վահանայ քաջութեանցն և

16 Փավստոս Բուզանդ, էջ 15—17։

առաջինի դիպուածոյն։ Վասն որոյ պարգևէ նմա արքայ զտեղի ճակատուն գՕշական, ուր ինքնակամ դիմագրաւ Նահատակն եղև։ Եւ փոխանակ Միհրանայ կարգէ զԳարջոյլ Մաղխազ նահապետ Խոռխոռունեաց ի վերայ զօրուն[17]։

Դժվար չէ համոզվել, որ չնայած որոշ տարբերություններին, Փավստոս Բուզանդի և պատմահոր նկարագրություններն իրար լրացնում են և հնարավորություն են տալիս առավել ամբողջական վերարտադրելու արշավանքի պատմությունը։ Համաձայն Փավստոսի հաղորդման, մազքութների հրոսակները, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում հոները, աղվանից ցեղերի և կովկասյան լեռնականների ուժերը, հանձին փոխերի, թավասպարների, հեճմատակների, իժմախների, գաթերի, գղուարների, գուգարների (գարգառների), շիչբերի, ճիղբերի, բաղասիճների, եգերսուանների և այլևայլ վաչկատունների, անցնում են Կուրը և ասպատակում Մեծ Հայքի թագավորության հյուսիսային, կենտրոնական ու արևելյան շրջանները։ Ինչպես վկայում է պատմահայրը, հայկական հյուսիսային զորաբանակը Միհրան բդեշխի գլխավորությամբ փորձում է կասեցնել մազքութներին, սակայն ուժերի անհավասարության պատճառով պարտություն է կրում, իսկ Միհրան բդեշխն էլ սպանվում է։ Հյուսիսային զորաբանակի պարտությունից հետո թշնամու ասպատակները արևմուտքում հասնում են մինչև Սատաղ փոքր քաղաքը, իսկ Մեծ Հայքի հարավ-արևելյան սահմանագլխին՝ Գանձակ Շահաստանի շրջակայքը։ Շուրջ մեկ տարի թշնամին զբաղված էր խժդժություններով, զանգվածաբար կողոպտում և գերեվարում էր բնակչությանը, երկիրը ասպատակում էր ու ավերում։ Այնուհետև թշնամու ջոկատները ձեռք բերած ավարով ու գերիների բազմությամբ հավաքվեցին Այրարատյան գավառում։

Պատերազմի սկզբում Խոսրով Կոտակ թագավորը, չկարողանալով կազմակերպել մազքութներին ջախջախելու գործը, Վրթանես քահանայապետի հետ ամրացավ Դարեվենից բերդում, որը գտնվում էր Կոգովիտ գավառում։ Սակայն դատելով Մովսես Խորենացու տեղեկությունից, նա որոշ ժամանակ անց ստիպված էր եղել հեռանալու թագավորության հարավ-արևմտյան շրջանները, դեպի Ծոփաց աշխարհ, որը ամենայն հավանականությամբ զերծ էր մնացել թշնամու հարձակումներից։ Չնայած մազքութների սկզբնական հաջողություններին, նրանց վիճակը հուսալի չէր։ Նրանց համար, ինչպես կարելի է եզրակացնել արշավանքի փավստոսյան և պատմահոր նկարագրություններից, այդպես էլ անխոցելի մնացին Մեծ Հայքի քաղաքներն ու ամրոցները, որոնք գրավելու համար մազքութները անհրաժեշտ փորձ և պաշարողական մեքենաներ չունեին։

Արշավանքի սկզբում հայոց սպարապետը՝ Վաչե Մամիկոնյանը (Արտավազդ Մամիկոնյանի որդին), ըստ երևույթին պետական ինչ-որ հանձնարարությամբ գտնվում էր Հռոմեական կայսրությունում։ Լուր առնելով հյուսիսականների արշավանքի մասին, նա վերադարձավ և կազմակերպեց հայկական ուժերը, որոնք, հանձին արևելյան և արևմտյան զորաբանակների, շարժվեցին դեպի Այրարատ։ Մովսես Խորենացին, որն ամենայն բարեխղճությամբ տալիս է հիշյալ զորաբանակների հրամանատարների՝ Բագարատ Բագրատունու և Վահան Ամատունու անունները, մոռացության է տալիս Վաչե Մամիկոնյանի անունը, որը, մեր կարծիքով, բացատրվում է Մամիկոնյան-

[17] Մովսէս Խորենացի, էջ 266—267։

ների նկատմամբ նրա ունեցած վերաբերմունքով։ Կարծես թե պատմահայրը փորձում է այնպես անել, որ Բագրատ Բագրատունու անունը չմթագնվի ամենայն հայոց հրամանատարի՝ Վաչե Մամիկոնյանի, հիշատակությամբ։

Հայոց արևելյան և արևմտյան զորաբանակները (հարավային Խոսրով Կոդակի հետ գտնվում էր Ծոփաց աշխարհում) առաջին հաջող ճակատամարտը տվեցին Ցլուխ գյուխ կոչվող լեռան մոտ։ Մագքթաց զորաբանակը ջախջախվեց, գերիներն աղատվեցին, իսկ ավարն ու կողոպուտը ետ խլվեց։ Շուտով հայկական բանակը մոտեցավ Վաղարշապատին, որը պաշարել էին Սանեսան թագավորի հիմնական ուժերը։ Վաղարշապատի ճակատամարտում Սանեսանի բանակը պարտվեց և ստիպված եղավ նահանջելու Օշականի առապար վայրերը՝ քարուտ և դժվարանցելի։ Վաչե Մամիկոնյանը, հմտորեն վարելով ճակատամարտը, հայկական այրուձիի բուռն գրոհներով թույլ չտվեց, որ մագքթիները, իրենց սովորության համաձայն, ցրիվ գալով բուռն նետաձգություն ձեռնարկեն, զրկեց նրանց ռազմական ծավալման հնարավորությունից և ստիպեց թշնամուն ակամա ընդունել ճակատամարտը։ Ճակատամարտի ժամանակ փայլեցին հայոց բանակի զորավարներ Բագրատ կամ Բագարատ Բագրատունին, Մեհենդակ (Փավստոս Բուզանդի մոտ՝ Մեհմունդակ) և Գարեգին Ռշտունիները, Վահան Ամատունին և Վարազ Կամիկանը, որը, ինչպես պարզ երևում է Փավստոս Բուզանդի այլ տեղեկություններից, Հաշտյանքի իշխանն էր։ Օշականի ճակատամարտն ավարտվեց հայոց բանակի փայլուն հաղթանակով։ Ճակատամարտի ժամանակ մագքթաց նիզակավորների գլուխ անցած հրամանատարը, որի ինքնության մասին կխոսվի ստորև, սպանվեց Վահան Ամատունու կողմից, որից հետո թշնամու զորքերը խուճապի մատնվեցին և դիմեցին փախուստի։ Օշականի առապարը ծածկվեց մագքթաց բանակի սպանված զինվորների դիակներով։ Խիստ քչերին հաջողվեց փրկվել հայ մարտիկների արդար վրեժխնդրությունից և հայոց բանակի հարվածների նեղքո փախչել բաղասիճների աշխարհը։

Փավստոս Բուզանդի հաղորդման համաձայն, ճակատամարտում սպանվեց Սանեսան թագավորը, որի գլուխը բերեցին հայոց թագավորին։ Վերջինս, որքան էլ տարօրինակ է, ողբաց նրա մահը որպես Արշակունյաց տոհմի ներկայացուցչի։ Ճակատամարտից հետո Օշականի առապար ժամանեցին Խոսրով Կոդակը և Վրթանես քահանայապետը, որոնց հրամանով գուգազ հանվեց և Ճակառակորդի զինվորների դիակները թաղվեցին։ Համաձայն պատմահոր հաղորդման, ճակատամարտի ժամանակ Խոսրով Կոդակը դեռևս գտնվում էր Ծոփքում, ուր և ուղղվեց Բագարատ Բագրատունին՝ հաղորդելու հաղթանակի լուրը։ Ի պատիվ Վահան Ամատունու սխրագործության, թագավորը նրան նվիրեց Օշականն իր շրջակայքով։

Հայկական բանակը Օշականի ճակատամարտում այնպիսի հարված հասցրեց մագքթաց բանակին, որ մագքթիները և նրանց դաշնակից կովկասյան լեռնականները երկար ժամանակ մոռացան Հայաստանի ճանապարհը։

Մագրութների արշավանքի, նրանց ավերածությունների ու հայոց զորքից գլխովին ջախջախվելու փավստոսյան նկարագրությունը հնարավորություն է տալիս կատարելու մի շարք էական եզրակացություններ։ Ամենից առաջ պարզվում է, որ Կուր գետը պետական սահման էր Մեծ Հայքի թագավորության և մագքթիների պետության միջև։ Նման հարցադրման դեպքում

Աղվանքը ներառվում է Մազքթաց թագավորության կազմի մեջ[18], հետևաբար աղվանները ևս պետք է մասնակցեին արշավանքին։ Ելնելով նման հայեցակետից, հիշյալ հատվածում հանդիպող «...հասանէին, հարկանէին զօրսն Ալանացն, Մազքթացն, և Հոնացն...» արտահայտությունը պետք է ընկալել «...հասանէին, հարկանէին զօրսն Աղուանից, և Մազքթացն, և Հոնացն...»։ Մյուս եզրակացությունն այն է, որ բացառվում է Սանեսանին Սանատրուկի հետ նույնացնելը, ինչպես ժամանակին սխալմամբ կատարել է Մովսես Կաղանկատվացին և ինչպես ներկայումս կատարում են մի շարք ուսումնասիրողներ։ Մովսես Կաղանկատվացին, որ հայոց արևելից կողմանց պատմությունն էր գրում տեղի իշխանական ընտանիքների որոշակի գաղափարախոսությամբ, իրեն հարկավոր ձևով վիրահատել է Մովսես Խորենացու հաղորդած տեղեկությունները։ Ըստ որում, այդ կատարվել է ոչ թե նրան հայտնի նոր նյութերի հիման վրա, այլ պատմահոր վկայությունները աղավաղելու միջոցով։ Ավելորդ չենք համարում ամբողջությամբ մեջբերել Մովսես Կաղանկատվացու երկի համապատասխան հատվածը. «Իսկ ի վախճանիլն Տրդատայ՝ Սանատրուկ ոմն թագաւորեաց Աղուանից ի Փայտակարան քաղաքի և եկաց դիմակաց Հայոց։ Եւ Խոսրովայ որդւոյ Տրդատայ ածեալ զԱնտիոքոս յունական զօրօքն և զբազարատ արևմտեայ գնդին, և զՄիհրան Վրաց բդեաշխ, այսորիւք ամենեքումբք միաբանեալ խաղայ ի վերայ Աղուանից։ Աճապարէ Սանատրուկ զօրօքն Աղուանից և գնայ առ Շապուհ արքայ Պարսից՝ թողով զօր բազում ի քաղաքին Փայտակարան։ Եւ Անտիոքոս առեալ աւար բազում և զհարկն արքունի՝ դառնայ առ կայսրն։ Եւ գտեալ ժամ պարապ Սանատրկայ՝ հրամանաւ Շապհոյ ժողովէ զզօրս Աղուանից թուով իբրև երեսուն հազար և արշաւէ ի միջոցս Հայոց։ Եւ զօրաձլուխ ոմն անարի հսկայ ի տիգաւորացն վառեալ բաղի։ կաճեայ՝ շահատակէր ի մէջ պատերազմին առ Օշական առապարաւ. եթէ զինուք հարկանէին՝ ոչ գործէր, այլ ճախր առնոյր։ Յայնժամ քաջն Վահան Ամատունի՝ նայեցեալ ի կաթուղիկէն, ասաց՝ օգնեա ինձ. և ուղղեալ զնիզակն՝ ընդ գաւակ ձիոյն յերկիր կործանէր զահագին վիրագն»[19]։ Դժվար չէ համոզվել, որ Մովսես Կաղանկատվացին, գրելով «Սանատրուկ ոմն թագաւորեաց Աղուանից ի Փայտակարան քաղաքի», ձգտել է իմաստավորել պատմահոր «Իսկ Սանատրկոյ թագ կապեալ ինքեան՝ ունի զքաղաքն Փայտակարան» և «Իսկ նորա պարսկական զօրօք լցեալ զքաղաքն Փայտակարան՝ ինքն առ արքայն Շապուհ փութացեալ անկանի. հանդերձ Աղուանից նախարարօք» տեղեկությունները։ Ենթադրելով, որ Սանատրուկը աղվանից նախարարների հետ Շապուհին ապավինել կարող էր, եթե նրանց թագավորը լիներ, Մովսես Կաղանկատվացին նրան «հռչակում է» Աղվանքի թագավոր և ի վերջո նրան էլ վերագրում Սանեսանի արշավանքը՝ որպես 30000-անոց աղվանից զորքերի արշավանք դեպի Հայաստան[20]։ Չի բացառ-

---

18 Այդ իրողությունը որոշակիորեն երևում է Փավստոս Բուզանդի մեկ այլ տեղեկությունից. «(Գրիգորիսը) ի հնգետասանամենից եհաս աստիճան եպիսկոպոսութեան աշխարհին Վրաց և Աղուանից, այս ինքն սահմանացն Մազքթաց» (էջ 10)։

19 «Մովսէսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի». Թիֆլիս, 1912, էջ 37—38։

20 Պատմահոր տեղեկության համաձայն մազքթաց բանակը բաղկացած էր 2 բյուրից, իսկ Մովսես Կաղանկատվացին այն հասցնում է 30000-ի։

վում, որ Փավստոսի երկում հիշատակված ալանները Մովսես Կաղանկատվացու կողմից ճիշտ ձևով ընկալվել են աղվաններ, սակայն արվել է սխալ եզրակացություն։

Սանատրուկին և Սանեսանին միևնույն անձ համարելով, Կ. Տրևերը զարմանք է հայտնում, թե ինչպես Արշակունյաց տոհմի համար սովորական Սանատրուկ անունը Փավստոսի մոտ դարձել է Սանեսան։ Ընդունելով հանդերձ, որ գրչական հիմքի վրա «Սանեսանից» չէր կարող առաջանալ «Սանատրուկ» և հակառակը, հեղինակը փորձում է այդ հանգամանքը բացատրել այն գրավոր կամ բանավոր աղբյուրով, որից օգտվել է Փավստոս Բուզանդը։ Իբրև թե ալանական կամ մագքության սկզբնաղբյուրում Սանատրուկի անունը տրված է եղել այլ տառադարձությամբ[21]։ Կ. Տրևերը սխալվում է նաև, երբ փորձում է ուշ շրջանի հեղինակների տեղեկություններն ընկալել քարացած ձևով։ Այսպես, Կիրակոս Գանձակեցու «Բայց Սանատրուկ, որ կողմանցն Աղուանից վերադացու կարգեալ էր ի Տրդատայ, իբրև լուաւ զմահ նորա, սպանանէ զսուրբն Գրիգորիս, զորդին Վրթանիսի, զեղբայր Յուսկանն՝ կապեալ զնա զագուոյ ամեհի ձիոյ ի դաշտին Վատնեան, և ինքն երթայ առ Շապուհ արքայ պարսից, և ընդունի զձև թագաւորութեան, հատուածէ զաշխարհն ի Խոսրովայ»[22] տեղեկությունը հասկանում է ուղղակի և գտնում, որ Սանատրուկը նշանակվել էր Աղվանքի վերակացու։ Իրականում Կիրակոս Գանձակեցին նույնպես օգտվել է պատմահոր երկից և, ելնելով իր ժամանակվա աշխարհագրական պատկերացումներից, երբ Կուրի և Երասխի միջագետքը դիտվում էր որպես հայկական Աղվանք, ուշ շրջանի հասկացությունները տեղափոխել է հին դարերը։

Այս հարցերը մեկնաբանելիս սխալներ է թույլ տվել նաև Ե. Պախոմովը։ Նա ոչ միայն ընդունում է Սանատրուկի և Սանեսանի նույնացումը, այլև եզրակացնում, որ Մովսես Խորենացին ցույց է տալիս սասանյանների կողմից Կուրի և Երասխի միջագետքը յուրացվելու ժամանակը, Փայտակարանի բնակչության ոչ հայկական՝ աղվանից լինելը և աղվանից ու պարսից կողմնորոշում ունենալը[23]։ Ինչպես վերը տեսանք, պատմահոր տեղեկությունները նման եզրակացությունների հնարավորություն չեն տալիս։

Ճիշտ է, Սանեսանը նույնպես Արշակունի էր[24], ինչպես և Սանատրուկը, և շատ «գայթակղիչ է» այդ անունների տակ միևնույն անձավորությունը տեսնելը, սակայն սկզբնաղբյուրների մանրազնին քննությունը բացառում է

---

21 К. В. Тревер, Очерки по истории и культуре кавказской Албании, М.—Л., 1959, с. 197.

22 Կիրակոս Գանձակեցի. Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 16—17։ Գրիգորիսի սպանությունը Սանատրուկին վերագրելը Կիրակոս Գանձակեցու «ստեղծագործությունն» է, որը ոչ միայն հակասում է պատմահոր և Փավստոս Բուզանդի տեղեկություններին, այլև բացառվում է թեկուզ այն տեսակետից, որ Սանեսանն ու Սանատրուկը տարբեր անձավորություններ են։

23 Е. А. Пахомов, Пайтакаран-Байлакан—Орен-кала («Материалы и исследования по археологии СССР», № 67, М.—Л., 1959, с. 17).

24 Տակիտոսի վկայությամբ, Հյուսիսային Կովկասի սկյութական թագավորը Արշակունի էր (Корнелий Тацит, Анналы, II, 68, Л., 1970)։ Սկյութների ներքո թերևս պետք է տեսնել մագքութներին, որոնց թագավորներից էր IV դ. Սանեսանը։

ամբողջությամբ նման հնարավորությունը։ Փայտակարան քաղաքի ցանկացած տեղադրության դեպքում Սանատրուկի օրապակաս «թագավորության» տարածքը պետք է տարածվեր Կուր գետից հարավ, իսկ Սանեսանի թագավորության հարավային սահմանը, ինչպես ցույց է տալիս Փավստոս Բուզանդի տեղեկությունը, Կուր գետն էր։ Սանեսանը ընդունեց Գրիգորիս եպիսկոպոսին որպես թագավոր, իսկ պատմահոր վկայությունից պարզ երևում է, որ Սանատրուկը իրեն «թագավոր» հռչակեց լոկ Գրիգորիսի մահից հետո։ Հարկ է նշել նաև, որ պատմահայրը և Մովսես Կաղանկատվացին, ըստ երևույթին, գիտեն Սանեսանի մասին (առաջինը հստակորեն, իսկ երկրորդը՝ անգիտակցաբար), որը գործողությունների ժամանակ հանդես է գալիս հանձին նիզակավորների զորագլուխ հսկայի, որին սպանեց քաջ Վահան Ամատունին։ Կարելի է այլ փաստարկներ էլ բերել Սանատրուկի և Սանեսանի տարբեր անձնավորություններ լինելու օգտին, սակայն կարծում ենք, որ բերվածներն էլ բավական են։

Մնում է պարզաբանել ևս երկու հարց։ Նախ՝ Փայտակարանը, այնուամենայնիվ, ազատագրվե՞ց բռնավոր Սանատրուկի իշխանությունից և պարսկական ապստամբ զորամասերից, թե ստեղծված քաղաքական կացությունը պահպանվեց։ Մեր կարծիքով, եթե որոշ կասկածներ կարող են ծագել Փայտակարանի՝ Անտիոքոսի հայ-հռոմեական բանակների կողմից ազատագրվելու վերաբերյալ, ապա, չնայած սկզբնաղբյուրները լռում են, մազքութերին 3լու գլուխ վայրում, Վաղարշապատում և Օշականի առապարում ջախջախելուց հետո հայկական բանակների համար ոչ մի դժվարություն չէր ներկայացնելու Փայտակարանի ազատագրումը։ Համենայն դեպս, դրա օգտին է խոսում Փայտակարանի՝ Մեծ Հայքի տարածքում գտնվելը Արշակ Բ-ի օրոք։

Մեզ հետաքրքրող մյուս հարցը Սանեսանի զորքերի արշավանքի տարեթվի խնդիրն է։ Յ. Մարքվարթը[25] և Հ. Մանանդյանը[26] արշավանքը թվագրում են 335-ով։ Յ. Մարքվարթի կարծիքով Վաչե Մամիկոնյան զորավարը, որը ջախջախել էր Սանեսանին, գնացել էր Հռոմեական կայսրություն օգնություն խնդրելու և հյուսիսականների ջախջախումն էլ կատարվել էր հռոմեական զորքի օգնությամբ[27]։ Երնելով պատմահոր և Փավստոս Բուզանդի տեղեկություններից, այդ տեսակետը պետք է մերժել։ Նախ՝ ո՛չ Փավստոս Բուզանդը, և ո՛չ էլ բարեխղճորեն ամենայն մանրամասնություն հաղորդող պատմահայրը չեն վկայում հռոմեական օժանդակության մասին, իսկ արշավանքն էլ, որպես պատասխան Անտիոքոսի հայ-հռոմեական բանակների պատժիչ գործողությունների ընդդեմ Փայտակարանում հաստատված Սանատրուկի և թերևս նաև Սանեսանի, պետք է կատարված լիներ Խոսրով Կոդակի գահակալության սկզբներին։ Հայ ժողովրդի պատմության IV դ. ժամանակագրությունն ուսումնասիրողների կողմից դեռևս վերջնականորեն ճշտված չէ, ուստի մեր ամեն մի ենթադրություն, վերջին հաշվով, խարսխվելու է ավաղի

---

[25] J. Markwart. Die Entstehung der armenischen Bistümer. Rom 1902. S. 77—78.

[26] Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մասն Ա, Երևան, 1957, էջ 145—147։

[27] J. Markwart, նշվ. աշխ., էջ 77։

վրա։ Այնուամենայնիվ, եթե ընդունենք, որ Տրդատի մահը տեղի է ունեցել 330 թ., ինչպես ընդունում է Հ. Մանանդյանը, ապա արշավանքը տեղի է ունեցել 331 կամ 332 թ.։

ПОХОД МАЗКУТСКОГО ЦАРЯ САНЕСАНА НА АРМЕНИЮ

БАБКЕН АРУТЮНЯН

Резюме

В арменоведческой литературе в последнее время установилась традиция, отождествляющая мазкутского царя Санесана, предпринявшего в 30-х гг. IV в. поход на царство Великой Армении, с Санатруком Аршакуни, назначенным армянским царем Тиридатом III Аршакуни наместником города Пайтакарана. Однако детальный анализ первоисточников явствует, что их объединяла лишь принадлежность к роду Аршакуни. Данные армянских авторов показывают, что в 30-х гг. IV в. Албания входила в состав царства мазкутских Аршакидов, простиравшегося до реки Куры, а албаны, называемые Фавстосом Бузандом аланами, приняли деятельное участие в походе царя Санесана. Изучение сведений Мовсеса Хоренаци и Фавстоса Бузанда показывает, что наименование области Парск' Великой Армении в «Истории Армении» Фавстоса Бузанда является не искажением наименования Каспк, а констатацией факта существования в IV в. племени Παρσιοι, впервые упомянутого в труде греческого географа Страбона.